Իրանահայ համայնք

Թաներ Աքչամ. Թուրքիան պարտավոր է ճանաչել Հայոց Ցեղասպանությունը և ներողություն խնդրել հայերից



23 June, 2010 09:37:00 «Արաքս» շաբաթաթերթ,

Կայացավ «A Shameful act» գրքի շնորհահանդեսը

Երեկ, հունիսի 23-ին, երեկոյան ժամը 19:00-ին, ԹՀԹ Թեմական խորհրդի կողմից կյանքի կոչված Հայոց Մեծ Եղեռնի 95-ամյակը ոգեկոչող հանձնախմբի նախաձեռնությամբ, Թեհրանի «Հայ ակումբ»-ի սրահում, կայացավ թուրք հանրահայտ գրող և մտավորական, պատմաբան, Ամերիկայի «Քլարք» համալսարանի դասախոս՝ Թաներ Աքչամի հեղինակած «A Shameful act» (Ամոթալի արարք) գրքի պարսկերեն թարգմանության շնորհահանդեսը:

Հիշյալ միջոցառմանը ներկա էին գրքի հեղինակ Թաներ Աքչամը, Իսլամական խորհրդարանի ներկայացուցիչներ, Իսլ. խորհրդարանում Սպահանի և հարավային իրանահայության պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանը, Թեհրանում ՀՀ լիազոր և արտակարգ դեսպան Գրիգոր Առաքելյանը, հոգևորականներ, Թեմական խորհրդի և Պատգամավորական ժողովի ատենապետներ՝ դոկտ. Ադամ Հովհաննիսյանն ու Գևորգ Աբուլյանը և նույն մարմինների անդամներ, դեսպանատան աշխատակիցներ, Իրանի համալսարանների դասախոսներ, մտավորականներ, հայկական կառույցների, միությունների և մամուլի ներկայացուցիչներ, հայ և պարսիկ հրավիրյալներ՝ ավելի քան երեք հարյուր հոգի:

Շնորհահանդեսը սկսվեց բարիգալստյան խոսքով, ապա օրվա առիթով իր խոսքն ասաց պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանը, այնուհետ սեղմ տողերում ներկայացվեց հեղինակի կենսագրականը և բեմ հրավիրվեց ինքը՝ Թաներ Աքչամը, իր գրքի և մտքերի մասին արտահայտվելու համար: Թ. Աքչամը շնորհակալություն հայտնելով մտերմիկ ընդունելության և մթնոլորտի համար, ասաց մենք պարտավոր ենք մեր պատմությունը ընդունել և իմ գիրքը այդ պատմության մութը ծալքերն է, որ ներկայացնում է ընթերցողին:

Հեղինակն ապա պատասխանեց ներկաների հարցերին, ընդ որում մի ասրու հարցին, որ հարց տվեց, ինչո՞ւ հեղինակը չի խոսում նաև ասորիների ջարդի մասին, ասաց. «Ճիշտ է նաև կոտորվել են այլ քրիստոնյաներ, այդ շարքում նաև ասորիներ, բայց բոլոր գաղտնի հրամանագրերում շեշտված է՝ գործ չունենալ այլ քրիստոնյաների հետ, աքսորել և սպանել միայն հայերին»:

Իսկ վերջում Թ. Աքչամը իր ստորագրությամբ գրքեր հանձնեց ներկաներին: Գիրքը թարգմանել են Բաբաք Վահեդին և Մոհսեն Ղաեմմաղամին:

Հայաստան

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՌԱԳՈՒՅՆԻ ՏՈՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Հունիսի 15-ին Երեւանի փողոցներում «քայլում, պարում, երգում» էր հայոց եռագույնը: Կարմիր, կապույտ, ծիրանագույն գույներով հագուստներով հայ երիտասարդները այդ թվում՝ տարբեր բուհերից ուսանողներ, պարային համույթներ, սփյուռքահայ երիտասարդներ՝ վարչապետ Տիգրան Սարգսյանի հովանավորությամբ, տոնում էին Հայկական դրոշի օրը՝ հունիսի 15-ը: Ամենուր ծածանվող եռագույնը՝ հատկապես երիտասարդների ձեռքերում, մեծ վստահություն է ներշնչում վաղվա հանդեպ, տալիս միասնական լինելու հիմքեր: «Ես սիրում եմ մեր դրոշը, այն ուրախության, վառ գույներով է: Միշտ հպարտանում եմ նրա տեսքով», ասաց ուսանող Լիլիթը՝ փաթաթված կարմիր-կապույտ-ծիրանագույն դրոշով: Նախաձեռնությանը միացել էր նաեւ Ռուսաստանի հայերի միության Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան: Միջոցառումն ուղեկցվեց համերգային ծրագրով:

Պետք է անցնել հակահարձակման

Հայ Արիական Միաբանության հայտարարությունը

Արդեն բազմիցս ադրբեջանական կողմը խախտում է 1994թ. մի կերպ ձեռք բերված փխրուն զինադադարը եւ փորձում է սադրել հայկական կողմին՝ պարբերաբար վնաս հասցնելու գործելակերպով: Այսպիսով, փորձ է արվում նաեւ միջազգային շահագրգիռ կողմերին իբր փաստի առջեւ կանգնեցնելու եւ սեփական ռազմա-քաղաքական շահերը պարտադրելու առումով:

Օրերս, գիշերով, Արցախ-ԼՂՀ Չայլու գյուղի մերձակայքում Արցախի տարածք է ներխուժել ադրբեջանական զինված հետախուզական խմբավորում, որի առաջխաղացումը հայկական կողմն արժանի պատասխանով կասեցրել է: Տեղի ունեցած դիմահար մերձամարտում, ցավոք, հայկական կողմը տվել է 4 զոհ եւ 4 վիրավոր: Իսկ թշնամին մարտադաշտում թողել է 1 դիակ եւ մեծ քանակությամբ զինամթերք ու խուճապահար հետ է փախել: Սակայն, մեր ունեցած տվյալներով, ադրբեջանցիները մարտի ընթացքում տվել են 8-10 զոհ եւ շուրջ այդքան էլ վիրավորներ, որոնց քարշ են տվել հետները փախուստի ժամանակ:

Հայ Արիական Միաբանությունը տարիներ առաջ Արցախ-ԼՂՀ-ն հայտարարել է Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը՝ հաշվի առնելով ԼՂ-ի եւ ՀՀ-ի 1988 եւ 1989 թթ. խորհրդարանների որոշումները: Եվ այս հերթական հարձակումը ՀԱՄ-ը համարում է Հայաստանի սահմաններին եւ անվտանգությանը սպառնացող սադրանք:

Ուստի՝ ՀՀ իշխանություններին կոչ ենք անում եւս մեկ անգամ ճանաչել ՀՀ-ԼՂՀ վերամիավորման փաստը եւ համարժեք միջոցների դիմել՝ պաշտպանելու հայության իրավունքներն ու անվտանգությունը մեր միասնական երկրի մի հատվածում:

1. ՀՀ եւ ԼՂՀ խորհրդարանների միջոցով համատեղ վերահաստատել երկու հայկական պետությունների արդեն փաստացի վերամիավորումը եւ դիմել ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրներին, որ այլեւս հաշվի առնվի այդ հանգամանքը՝ ԼՂ-ի հարցի կարգավորման փաթեթում:

2. Դիմել նաեւ ՄԱԿ-ին, որը Ազգերի Լիգայի իրավահաջորդն է եւ պահանջել, որ ՄԱԿ-ը հետեւողական լինի իր նախորդի՝ ԱԼ-ի վճիռների իրականացման մեջ:

Իսկ ՄԱԿ-ի նախորդը՝ Ազգերի Լիգան 1920թ. իրավացիորեն մերժել է Ադրբեջանի ԱԼ ընդունվելու դիմումը՝ պատճառաբանելով, որ այդ հանրապետությունը չունի. "կայուն կառավարություն եւ չի վերահսկում այն տարածքները, որոնց հավակնում է": ԱԼ-ն ուրվագծել է նաեւ "Լեռնային Ղարաբաղ" վիճելի տարածքի սահմանները, որոնց խնդիրը պետք է կարգավորվեր Փարիզի Խաղաղության համաժողովում: Ըստ ԱԼ-ի քարտեզի, "Լեռնային Ղարաբաղ" վիճելի տարածքի մեջ էին մտնում ոչ միայն ԼՂՀ-ն ու այսօրվա ազատագրված շրջանները, այլեւ Գանձակը, Դաշքեսանը, Խանլարը, Նավթալանը, Գեդաբեկը, Շահումյանի շրջանը եւ այլ տարածքներ:

Այսպիսով, եթե նույնիսկ պատմական եւ իրավական տեսանկյունից շատ հեռու չգնանք (եթե հեռու գնանք թուրք-ադրբեջանցի անուն չենք էլ գտնի մեր տարածաշրջանի որեւէ երկրի որեւէ պատմական քարտեզի վրա), էլի ակնհայտ է, որ առ այսօր ԼՂՀ-ն (հայությունը) փորձել է վերականգնել ու պաշտպանել իր պատմական-օրինական՝ միջազգայնորեն ճանաչված սահմանները: Իսկ Ադրբեջանն իր կարճ գոյության ընթացքում (ընդամենը մասնա-բոլշեւիկյան որոշմամբ ստեղծված) երբեւիցե միջազգայնորեն ճանաչված հաստատուն սահմաններ չի ունեցել: Իսկ "խորհրդային ժառանգությունից" էլ ինքնակամ հրաժարվել է:

Ուստի՝ ՀՀ իշխանություններին նաեւ կոչ ենք անում՝ հաջորդ իսկ սահմանային սադրանքի դեպքում ոչ միայն համարժեք պատասխանել թշնամուն, այլեւ՝ անցնել հակահարձակման եւ շարունակել վերամիավորել հայկական այն հողերը, որոնք այսօր էլ մնում են ադրբեջանական բռնազավթման աքցաններում եւ Ազգերի Լիգայի (ուրեմնեւ՝ ՄԱԿ-ի) համապատասխան որոշումներով պատկանում են ""Լեռնային Ղարաբաղ" վիճելի տարածքի"-ն, այսինքն՝ Հայաստանին:

Պետք է մեկընդմիշտ լուծել այսպես կոչված ադրբեջանցիների (իրականում՝ կովկասյան թյուրք-թաթարների) հետ մեր հարցերը, իսկ դա հնարավոր է միայն հայկական հողերի ամբողջական ազատագրման դեպքում: Ուրեմն, պետք է հաջորդ իսկ ադրբեջանական հարձակումը ավարտվի հայկական կողմի հակահարձակմամբ եւ Շահումյանի շրջանի, Դաշտային Արցախի (Ուտիքի), Գանձակի ազատագրմամբ:

Հայ Արիական Միաբանությունը համախմբման կոչ է անում բոլոր նախկին ազատամարտիկներին, ովքեր պատրաստ են դադարեցված ազատագրական պայքարի վերսկսմանը:

Բաքվում երեւի թե մոռացել էին, որ 1994թ. իրենք էին աղերսում զինադադար, որպեսզի հայկական ուժերը չհասնեն Բաքու: Ըստ ամենայնի՝ եկել է մեր սխալն ուղղելու ժամանակը…

Հայ Արիական Միաբանության
Գերագույն Խորհուրդ

21.06.2010թ.

«ԵԹԵ ՊԱՏԵՐԱԶՄ ՍԿՍՎԻ, ԵԶԴԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԿԱՆԳՆԻ ՀԱՅԻ ԿՈՂՔԻՆ»

Հունիսի 18-ին ԼՂՀ տարածքում ադրբեջանական դիվերսիոն խմբի իրականացրած վայրագությունը, երբ 4 հայ զինվոր զոհվեց, Համայն աշխարհի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը բնութագրում է անմարդկային արարք: «Նրանք թուրք են, նույն ցեղասպան ցեղից, որ շարունակում են մորթել, սպանել: Հայ զինվորների մահը մեծ ողբերգություն է,

ՀԱՅԿ ԲԱՐԱԼՅԱՆ «ՖՈՏՈԼՈՒՐ»-Ի ԴՈՒՌԸ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾ Է

եզդի ժողովուրդը խոնարհվում է նրանց շիրիմների առաջ», ասաց նա:

Վկայակոչելով պատմությունը՝ Ազիզ Թամոյանը հիշեցնում է, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո շուրջ երկու տասնյակ պետությունների օրինակով անկախություն ստացավ նաեւ Ղարաբաղը: «Դա հայկական հող է, ուր կան բազմաթիվ սրբավայրեր: Ադրբեջանի ղեկավարն այս ամենն անում է իր համար, իր աթոռի համար, նա իր ժողովրդի մասին չի մտածում»:

Ընդգծելով, որ 500 եզդի իր հրամանատարությամբ մասնակցել է ղարաբաղյան պատերազմին, Թամոյանը հավաստիացրեց, որ 60.000 բնակիչ ունեցող եզդի համայնքը հայ ժողովրդի բարեկամն է եւ պատրաստ է աջակցել: «Մենք եղել ենք ու կլինենք եղբայր հայերի կողքին: Եզդիները ձեզ հետ են: Թո՛ղ կրտսեր Ալիեւն իմանա. եթե նորից պատերազմ սկսվի, եզդի ժողովուրդը կկանգնի հայի կողքին եւ կպայքարի արդարության համար»:

Հոգեհանգստյան արարողություն՝ զոհված չորս հայ զինվորների համար

Հունիսի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ս. Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն հունիսի 18-19-ի գիշերը Մարտակերտի Չայլուի հատվածում արձանագրված դատապարտելի միջադեպի՝ ադրբեջանական դիվերսիոն հարձակման արդյունքում զոհված չորս հայ զինվորների համար: www.haynews.am



ԱՄՆ-ն և Ռուսաստանը պայմանավորվել են պատերա՞զմ սկսել Ղարաբաղում

Եվրոպայի հայկական միությունների ֆորումը հայտնում է, որ մայիսի վերջին Եվրոպայի գաղտնի ծառայություններից տեղեկություն է ստացել, ըստ որի՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի նախագահների միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ «ամռան ամիսներին արցախյան սահմանագծի վրա կազմակերպվելու են միջադեպեր՝ Ադրբեջանի և Հայաստանի նախագահների հետ պայմանավորված, որի արդյունքում սկզբում տրվելու են տասնյակ զոհեր, այնուհետև կազմակերպվելու է կարճ, մեծածավալ պատերազմ, որում երկու կողմերից զոհերի թիվը կարող է հասնել հազարների: Պատերազմն ընդհատվելու է գերտերությունների կողմից, և վերը նշված շրջաններ մտցվելու են խաղաղապահ զորքեր՝ Ֆիզուլի ԱՄՆ-ի կողմից, Քելբաջար՝ Ռուսաստանի»:

ԵՀՄՖ-ն նշում է, որ «այս տեղեկատվության իրավացիությանը կարելի է կասկածել, կարելի է մասամբ հավատալ և կարելի է ամբողջովին հավատալ: Եթե ելնենք հունիսին արդեն կայացած միջադեպերից և դրան տրված միջազգային հանրության արձագանքից, հատկապես Մինսկի խմբի համանախագահների ու ամերիկյան իշխանության կողմից տրված կողմնակալ և զսպված գնահատականներից, կարելի է այդ տեղեկատվությանը հավատալ:

Տեղեկատվությանը հավատալուն տրամադրում է նաև ԱՄՆ-ի վարչակազմի Իրանի ադրբեջանական սահմանագծին մոտ զորքեր մտցնելու հավաստի ցանկությունը: Մեզ համար շատ կասկածելի է այսպիսի պայմանավորվածությանը ՀՀ նախագահի մասնակցության տարբերակը: Այստեղ մենք ավելի շատ թուրքական սադրանքի հոտ ենք առնում՝ սփյուռքին ՀՀ նախագահի հետ հակադրելու միտումով, սակայն ոչինչ չբացառելու սկզբունքով քննարկման ենք ներկայացնում դեպքերի զարգացման բոլոր հնարավոր տարբերակները: Կարծում ենք, որ բոլորովին ավելորդ չի ողջ աշխարհի հայության ուշադրությունը բևեռելու վերոհիշյալ տարբերակների վրա՝ Արցախի և Հայաստանի գլխին կախված արհավիրքից ազատվելու համար, հատկապես որ արցախյան խնդրի զարգացման վերջին ամիսների գործընթացը բավականին հաստատում է վերը բերված վերլուծության ճշմարտացիությունը»:

“Աբսուրդ է մայր հայրենիքում օտար լեզվով հանրային կրթություն իրականացնելը”

”Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը” քաղաքացիական նախաձեռնությունն 2 օր անընդմեջ Ազգային Ժողովի մուտքի մոտ բողոքի ցույց էր կազմակերպել:

”Մեր բողոքի նպատակն էր պատգամավորների ուշադրությանը հրավիրել այն փաստի վրա, որ հասարակության մի մեծ զանգված մերժում է այդ նախագծերը”,- ասում են քաղաքացիական նախաձեռնության անդամները, բայց, ցավոք, ՀՀ կառավարությունն ու պատգամավորների մեծ մասը այլ խնդիրներ է լուծում՝ օտարներին սիրաշահելու:

Այս օրինագծերը կխարխլի մեր ազգային անվտանգության հիմքերը, հայտարարում են ցուցարարները:

Մարդիկ մտավախություն ունեն, որ օտարալեզու դպրոցների բացման հետեւանքով կսկսվեն փակվել հայկականն դպրոցները: Այսօր շատ լուրջ խնդիր կա դպրոցներում ուսման որակի հետ կապված եւ պետք է ուշադրությունն ավելի շատ այդտեղ դարձնել:

”Մենք կողմ ենք օտար լեզուների ուսուցմանը, սակայն դա իրականացնելու միակ ձեւը օտարալեզու դպրոցների բացելը չէ: Օտար լեզուների ուսուցման բազմաթիվ ձեւեր են հայտնի: Մենք այսօր կրթական համակարգը փոխելուն ենք դեմ”,- նշում են “Մենք դեմ

ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը” քաղաքացիական նախաձեռնության կազմակերպիչները:

”Լուսանցք” թիվ 155, հունիսի 25ի- հուլիսի 1 2010թ.

«Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը»

Հանրային խորհուրդը կզբաղվի կրթական հարցերով

Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանն ասել է, որ հայոց լեզու եւ գրականություն, ինչպես նաեւ մաթեմատիկա առարկաների թեսթերն առաջիկայում կդառնան Հանրային խորհրդի կրթության հանձնաժողովի քննարկման առարկա: Այս թեսթերի վերաբերյալ մեծ աղմուկ առաջացավ վերջերս նաեւ մասնագետների շրջանում:

Վ. Մանուկյանը հայտնել է, որ այսուհետ իրենք ավելի շատ քննարկելու են կրթական հարցեր:

Իրան

ԻՐԱՆՆ ՈՒԺԵՂԱՑՆՈՒՄ Է ԵՐԿՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

Իրանի ոստիկանական ուժերի հրամանատար, գեներալ Էսմայիլ Ահմադ Մողադամը նախօրեին ներկայացրել է երկրի հյուսիսային՝ Արեւմտյան Ազերբայջան նահանգի սահմանապահ եւ ոստիկանական ծառայությունների նոր հրամանատարներին: Հրամանատարների փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Իրանը որոշել է ուժեղացնել հյուսիսային սահմանների (Ադրբեջանի հարեւանությամբ-Հ. Ա.) վերահսկողությունը: Այս նպատակով գեներալ Մողադամը նշել է, որ բոլոր սահմանային ուղեկալները կզինվեն նորագույն տեխնիկայով. «որպեսզի կանխվի թշնամու՝ հեռվից կառավարվող ռումբերի գործարկումը», ըստ «Իռնա» գործակալության՝ նշել է Մողադամը: Գեներալը, կոնկրետ խոսելով Արեւմտյան Ազերբայջանի մասին, նշել է. «Անվտանգության ապահովման առումով այս նահանգին պետք է առավելագույն ուշադրություն դարձնենք, քանի որ այս նահանգի շնորհիվ է հնարավոր է եղել չեզոքացնել ներքին եւ արտաքին թշնամիների սպառնալիքները»:

ԻՐԱՆԱԿԱՆ ԹԵՐԹԸ ԽՈՍՈՒՄ Է ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«Լեռնային Ղարաբաղի բնակչությանը չպետք է պարտադրել, թե որտեղ նրանք պետք է ապրեն, նրանց չպետք է զրկել ընտրության իրավունքից: Ղարաբաղի բնակչության համար անհրաժեշտ է հարմարավետ կենսապայմաններ ապահովել», նման հրապարակմամբ հանդես է եկել իրանական «Աբրար» օրաթերթը՝ «Հայացք Ղարաբաղի հակամարտությանը» վերնագրով վերլուծական հոդվածում: Իրանական պարբերականը շարունակում է, գրելով. «Ղարաբաղի խնդրում կարեւորն այնտեղ ապրող մարդկանց ճակատագրի տնօրինման իրավունքն է, որն ավելի կարեւոր է, քան պետությունները, պետական շահերից առավել կարեւոր են մարդիկ: Հետեւաբար Ղարաբաղի խնդիրը նույնպես պետք է հենց այդ մտայնությամբ եւ ճանապարհով լուծվի»:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ աշխարհի տարբեր ծայրերում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆրանսիայում, հիմա էլ արդեն Իրանում այսօրինակ հրապարակումները ավելի հաճախակի են դարձել. աշխարհը կարծես թե սկսում է իրազեկվել Ղարաբաղի իրական պատմությանը: Այս առումով նույն իրանական թերթը նկատում է. «Ժամանակակից աշխարհը փոփոխվում է, պետությունները մեծանում կամ փոքրանում են, եւ սա բնական գործընթաց է: Իսկ կոնկրետ ղարաբաղյան հակամարտության համար չպետք է գոյություն ունենա լուծման ռազմական ճանապարհ», եզրափակում է «Աբրարը»:

Միջազգային

BP-Ն ՀԵՌԱՆՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻՑ

British Petroleum-ը դադարեցնում է իր գործունեությունը Ադրբեջանում: Նման տեղեկություն էր հայտնվել ադրբեջանական կայքէջերում դեռեւս նախորդ շաբաթավերջին: Ամեն դեպքում, ըստ նույն աղբյուրների, ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը Ադրբեջանում, եւ այդ հիմքով էլ նրա գրանցումը կհայտարարվի անվավեր:

Այս տեղեկությունը կարող է նշանակել ադրբեջանական նավթային միջոցների որոշակի կրճատում ու դրա հետ մեկտեղ որոշ նախագծերի սառեցում, ինչպես նաեւ ռազմական գործողությունների չգնալու զսպող միջոցներից մեկի չեզոքացում:

Հասարակական

Մեր լեզուն՝ ճկուն, բայց խոցելի

Բաբկեն ԹՈՒՆՅԱՆ -168 ժամ

Օտարալեզու դպրոցների բացման հետ կապված արձագանքը զարմանալիորեն շա՛տ բուռն արձագանք ստացավ: Բողոքի ակցիաներ, հոդվածներ, ասուլիսներ, անգամ հատուկ ինտերնետային կայք՝ «Ընդդեմ լեզվի օրենքի փոփոխությանը»:

Չէ, իհարկե, լավ է, որ հասարակությունը կարողանում է հակազդեցության այսպիսի դրսեւորումներ ցուցաբերել: Պակաս լավ չէ, որ սոցիալ-տնտեսական, ներքաղաքական ու աշխարհաքաղաքական խնդիրները մոռացած՝ այսքա՜ն անհանգստանում են մայրենի լեզվի համար: Բայց այդ ամենով հանդերձ՝ արձագանքը շա՛տ զարմանալի է ու անհասկանալի: Ինչո՞ւ: Թերեւս ավելի հեշտ է ասել՝ ե՞րբ զարմանալի չէր լինի: Չէր լինի այն դեպքում, եթե նույն մարդիկ, նույն համառությամբ վրդովվեին ու բողոքի ակցիաներ անեին, որ հայրենի Ազգային ժողովում գումարումից գումարում իջնում է հայերեն լեզվի նշաձողը: Ըստ տրամաբանության, լեզվի մասին այսքան անհանգստացող ազգը պետք է կամ չընտրեր նորմալ հայերեն խոսել չիմացող մի շարք պատգամավորների, կամ էլ՝ եթե իրենց կամքին հակառակ «կեղծել» են, հուժկու բողոքի ալիք բարձրացնեին կեղծողների դեմ:

Պակաս զարմանալի չէ նաեւ այն, երբ հայոց լեզվի ջատագով պաշտպանների թվում տեսանք մարդկանց, որոնք ակտիվորեն պաշտպանում են աղանդավորների ու համասեռամոլների իրավունքները: Փաստորեն, ստացվում է՝ ավելի լավ է լինել հայկական դպրոց ավարտած համասեռամոլ կրիշնայական, քան ռուսախոս նորմալ տղամարդ: Փաստորեն՝ այս վերջինը մատաղ սերնդի ու հայ ազգի ինքնության համար ավելի վտանգավոր երեւույթ է, քան առաջինը:

Ինչեւէ, նորից շեշտենք՝ լավ է, որ հայերը անհանգստանում են հայոց լեզվի համար, ու լավ է, երբ փորձում են իրենց բողոքը տեղ հասցնել: Սակայն այս ոգեւորությունը, մյուս կողմից, վկայում է այն մասին, թե որքան թույլ ու խոցելի ենք համարում ինքներս մեզ:

Բողոքն ավելի հասցեական դարձավ, երբ վարչապետ Տիգրան Սարգսյանը BarCamp ճամբարում հայտարարեց, որ «Լեզվի» եւ «Հանրակրթության մասին» օրենքներում փոփոխությունները թելադրված են Հայաստանում Թաիլանդի ռեգենտների դպրոցի եւ Դիլիջանում ռուսաստանցի հայ գործարար Ռուբեն Վարդանյանի միջազգային դպրոցի գործունեությունը թույլ տալու անհրաժեշտությամբ: Բանն այն է, որ այդ դպրոցում ուսուցումը լինելու է անգլերեն: Հետո ինտերնետում հրապարակվեց բաց նամակ՝ ուղղված Դիլիջանի Միջազգային դպրոցի հոգաբարձուների խորհրդին՝ ուսուցումը հայերեն կազմակերպելու խնդրանք-պահանջով:

Լայն զանգվածներին Ռուբեն Վարդանյանի կողմից հիմնադրվելիք դպրոցը ներկայացվեց հիմնականում այս կտրվածքով՝ էլիտար դպրոց, անգլերեն ուսուցմամբ: Ու նաեւ մամուլում հայտնվեց տեղեկություն, որ ուսուցման գինը կազմելու է 22 հազար ԱՄՆ դոլար:

Կարծում ենք՝ ընթերցողներին հետաքրքիր կլինի որոշակի տեղեկություններ ունենալ այդ դպրոցի (եւ ոչ միայն) մասին: Նախ նշենք, որ ուսուցումն իրոք անգլերեն է: Սակայն, բնականաբար, այդպես էլ պետք է լիներ, քանի որ դպրոցը պետք է լինի միջազգային: Դասավանդելու են արտասահմանցի մասնագետներ, եւ 600 սովորողների մեծ մասը լինելու են արտասահմանցիներ: Հիմնարկեքը եղել է ընդամենը 2 ամիս առաջ, իսկ բացումը նախատեսված է 2013թ. սեպտեմբերին: Ուսման վարձի մասին խոսք դեռեւս չկա:

Նշենք, որ Ռուբեն Վարդանյանը ուսումնական հաստատություն հիմնելու մի հաջողված փորձ արդեն ունի: Ռուսաստանում նա հիմնադրել է «Սկոլկովո» կոչվող բիզնես-դպրոցը: Այստեղ եւս ուսուցումն անգլերենով է, դասավանդում են բարձրակարգ մասնագետներ: Հոգաբարձուների խորհրդի նախագահն է Դմիտրի Մեդվեդեւը, անդամների թվում են Սինգապուրի նախկին վարչապետ Լի Կուան Յուն, ՌԴ վարչապետի առաջին տեղակալ Իգոր Շուվալովը, «Flagship Ventures» ընկերության ղեկավար Նուբար Աֆեյանը, ՌԴ տնտեսական զարգացման նախկին նախարար Գերման Գրեֆը, «Monitor Group» ընկերության ղեկավար Մարկ Ֆուլլերը եւ շատ այլ հայտնի մարդիկ: Ռեկտորը Անդրեյ Վոլկովն է, դեկանը՝ մարկետինգի գծով համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական Վիլֆրիդ Վանհոնակերը: Ուսուցման որակի մասին, կարծում եմ, ավելորդ է խոսել: Գներն էլ բավականին բարձր են: Օրինակ, MBA (բիզնեսի կառավարում) 16 ամիս տեւողությամբ ծրագրի արժեքը 60 հազար եվրո է: Այն, սակայն, իր մեջ ներառում է աշխարհի լավագույն բիզնես-դպրոցների պրոֆեսորների դասախոսություններ, անհատական եւ խմբային պարապմունքներ, անհրաժեշտ բոլոր դասագրքերն ու մյուս պարագաները (այդ թվում՝ նոութբուքեր), ապրուստը եւ սնունդը՝ ինչպես «Սկոլկովոյի» տարածքում, այնպես էլ այն երկրներում, որտեղ անցկացվում են միջազգային ուսումնական այցեր, ուղեւորություններ Չինաստան, Հնդկաստան, ԱՄՆ եւ այլուր:

Նշենք նաեւ, որ դպրոցն ունի շուրջ 600 մշտական սովորող աշխարհի տարբեր երկրներից, եւ մոտ 9000 մասնակիցներ տարբեր ծրագրերում: Հիմա ի՞նչ՝ ռուսները բողոքե՞ն, որ ուսման վարձը թանկ է, եւ բոլորը հնարավորություն չունեն սովորելու: Կամ անհանգստանա՞ն, որ ռուսերեն լեզուն ետին պլան է մղվում: Դժվար թե, որովհետեւ իրենք իրենց վրա վստահ են:

Գանք, սակայն, քննարկման թեմա դարձած Դիլիջանի միջազգային դպրոցին: Այդ դպրոցը, որպես այդպիսին, բարձրագույն բիզնես-դպրոց չէ: Այնտեղ սովորելու են 13-18 տարեկան երեխաներ: Եվ հաջողության դեպքում, նրանց մեծ մասը կլինեն արտասահմանցիներ: Վա՞տ է դա արդյոք:

Նշենք, որ դպրոցի հոգաբարձուների խորհրդին ուղղված բաց նամակի հեղինակները իրենք էլ խոստովանում են, որ դպրոցի գաղափարը լավն է: Սակայն վատն այն է, որ անգլերենով է, խորհուրդ են տալիս ուսուցումը կազմակերպել հայերենով: Իսկ դա արդեն անհասկանալի է, դպրոցը կորցնում է իմաստը: Ինչպե՞ս եք պատկերացնում, որ, ասենք, վրացին իր երեխային ուղարկի Դիլիջան՝ հայերենով ուսում անցնելու: Բացի այդ, ինչպե՞ս պետք է արտասահմանցի

դասախոսները ուսուցանեն: Իսկ նրանց մասնակցությունը ոչ միայն՝ գիտելիքի որակի տեսանկյունից է կարեւոր, այլ՝ գրեթե կբացառի կաշառքով գնահատական ստանալու երեւույթը: Սակայն ստացվում է, նման դպրոցում անգլերենով ուսուցումն այնքա՛ն վտանգավոր է, որ ավելի լավ է իսպառ հրաժարվել այդ գաղափարից:

«Կսկսվի աստիճանական, բայց անդառնալի մի գործընթաց, երբ ծնողներն իրենց երեխաների համար առավել լավ կրթություն փնտրելիս կնախընտրեն օտարալեզու դպրոցը, դրանց աշակերտները, ստանալով առավել լավ կրթություն, կընդունվեն լավագույն բուհերը, կզբաղեցնեն առաջատար դիրքեր, մասնավոր եւ կառավարական հատվածներում կձեւավորվի օտարախոս՝ վերնախավ»,- գրում են նամակի հեղինակները՝ ավելացնելով, որ վերնախավին կհետեւեն մնացածները, որոնք կուզեն, որ իրենց երեխաները նույնպես հասնեն հաջողությունների: «Դա կտրուկ կիջեցնի հայերենի հաղորդակցական հնարավորությունները եւ հեղինակությունը՝ դուրս մղելով նրան հասարակական կյանքի բոլոր բնագավառներից, ապա հարցականի տակ կդնի՝ ընդհանրապես այդ լեզվի գոյությունը, հետեւապես նաեւ՝ հայ ազգի գոյությունը»:

Սա նշանակում է, որ մենք հույսներս կտրել ենք, որ հայկական դպրոցները երբեւէ նորմալ կրթություն կտան, ի սկզբանե ընդունում ենք, որ հայկական դպրոցները մրցակցությանը չեն դիմանա, եւ բոլորը, ովքեր հնարավորություն ունեն, կգնան օտարալեզու դպրոցներ: Բայց փոխանակ հայկական դպրոցների որակը լավացնելու, փոխանակ պայքարելու, որ հիմար դասագրքերով երեխաներին չփչացնեն, կաշառք չվերցնեն, նորմալ դասընթաց անցկացնեն, մենք ավելի հեշտ ճանապարհ ենք ընտրում՝ «էս գլխից» արգելելով մրցակցի հայտնվելը: Ամեն դեպքում, եթե 10-15 օտարալեզու դպրոցների գոյությունից վախենում ենք, ուրեմն խոստովանում ենք, որ ազգային ինքնագիտակցության, հայրենասիրության եւ մյուս կարեւոր կատեգորիաները մեզանում շատ խախուտ հիմքերի վրա են դրված: Եթե «օտարին» զցվող ենք, արգելքները հաստատ չեն օգնելու:

Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ

ԺԱՄԱՆԱԿՆ Է ԴԻՄԵԼՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ

Մեծ եղեռնը՝ օսմանյան Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանությունը մարդկության պատմության խորհրդանշական իրադարձություններից է, քանի որ ողբերգականորեն ազդեց հայ ժողովրդի ճակատագրի վրա: Ցեղասպանության չհաղթահարված հետեւանքները մինչեւ օրս խանգարում են Հայաստանի եւ հայ ժողովրդի բնականոն զարգացմանը քաղաքականության, տնտեսության, ժողովրդագրության, մշակույթի, բարոյականության, հոգեբանության եւ, իհարկե, ազգային անվտանգության բնագավառներում:

Անցած տարիներին հայ ժողովուրդը համախմբված կամք դրսեւորելով՝ հասել է աշխարհի շատ պետությունների կողմից Հայոց ցեղասպանության հանցագործության ճանաչմանը եւ Թուրքիայի դատապարտմանը:

Այդուհանդերձ ժամանակակից Թուրքիան շարունակում է Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության փաստը ժխտելու քաղաքականությունը: Անկարան Հայոց ցեղասպանության փաստի կապակցությամբ միջազգային հանրությանը ապատեղեկացնելու եւ պատմությունը խեղաթյուրելու ամեն տեսակ հնարավորություններ է գտնում:

Նման բարդ իրավիճակում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը 2008 թ. Թուրքիայի հետ երկխոսություն սկսեց դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ առանց նախապայմանի պետական սահմանները բացելու հարցի շուրջը:

Սակայն Թուրքիան այս անգամ եւս փորձեց գործընթացից քաղել միակողմանի շահաբաժիններ, Հայաստանին ներկայացնելով Ղարաբաղի խնդրի կարգավորման պայմաններ: Հայաստանի ղեկավարությունն ըստ արժանվույն մերժեց թելադրանքի բոլոր դրսեւորումները եւ ստիպված կասեցրեց հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը համաշխարհային ընկերակցությանը ցույց տվեցին, որ Հայաստանը եղել եւ մնում է խաղաղասեր պետություն, որը հանդես է գալիս բոլոր հարեւանների հետ տարածաշրջանային գործընկերության օգտին եւ ըստ այդմ պատրաստ է Թուրքիայի հետ հաստատել լիարժեք միջպետական հարաբերություններ, բայց առանց նախապայմանների:

Միաժամանակ Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն շարունակել է իր արտաքին քաղաքական օրակարգում պահել համաշխարհային ընկերակցության կողմից օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստի ճանաչման ու դատապարտման գործընթացը: Շվեդիայի խորհրդարանի եւ ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի վերջերս ընդունած բանաձեւերը ակնբախորեն վկայում են Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության հետեւանքների

հաղթահարման եւ արդարության վերականգնման նկատմամբ չթուլացող հետաքրքրության մասին:

Եվ քանի որ մենք թեւակոխում ենք պատասխանատու ժամանակաշրջան՝ 5 տարի հետո նշելու ենք Հայոց ցեղասպանության 100-ամյակը, կարծում եմ, խիստ հրատապ է առաջարկել Հայաստանի եւ Սփյուռքի համատեղ գործունեության նոր հայեցակարգ օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հարցի կապակցությամբ:

Մեր հայեցակարգի էությունն այն է, որ միջազգային հարաբերություններում Հայաստանի քաղաքականության գլխավոր սուբյեկտը ժամանակակից Հայաստանի Հանրապետությունն է, նրա ժողովուրդը եւ իշխանության մարմինները: Այլ կերպ ասած, մենք պետություն ունեցող ազգ ենք եւ պարտավոր ենք օգտվել միջազգային սուբյեկտի մեր կարգավիճակից: Դրա հետ մեկտեղ, համազգային խնդրի առթիվ Հայաստանի դիրքավորման որոշումը կարող է կայանալ Սփյուռքի ներկայացուցչական մարմինների եւ լիազոր ներկայացուցիչների եռանդուն մասնակցությամբ:

Արդի Սփյուռքում պահանջների փաթեթը որոշելիս ներկայացված են տարբեր մոտեցումներ: Եվ դրանք հնչում են հայկական սփյուռքի առնվազն չորս աշխարհագրական եւ քաղաքական կենտրոններից (ներառելով Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Լիբանանը): Սակայն մեզ միավորում է միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա Ցեղասպանության հետեւանքները հաղթահարելու, ցեղասպանության զոհերի իրավունքները վերականգնելու ցանկությունը, այդ թվում՝ պատմական հայրենիքի, նյութական եւ բարոյական փոխհատուցման նրանց իրավունքի իրացումը:

Նման դեպքերում միջազգային պրակտիկան ենթադրում է գործունեության երկու՝ քաղաքական եւ դատական ուղղությունների միավորում:

Եթե քաղաքական գործունեության մեջ մենք ունենք որոշակի արդյունքներ, ապա Միջազգային դատարանին դիմելը պահանջում է առավել քրտնաջան աշխատանք:

Դատարանին գիտականորեն հիմնավորված դիմելուն մանրակրկիտ նախապատրաստվելու մի շատ կարեւոր մասը կատարված է Ռուսաստանի հայերի միության Միջազգային իրավունքի եւ քաղաքագիտության հայկական ինստիտուտի կողմից: Նախ եւ առաջ, հրատարակված է «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества» եռահատորյակը, որի կազմողը եւ պատասխանատու խմբագիրը ականավոր գիտնական, պրոֆ. Յու. Գ. Բարսեղովն է: Երկրորդ, մեր ինստիտուտի փորձագիտական խումբը միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն անցկացրել է Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության իրացման հնարավորության գիտական վերլուծության եւ մշակել դատական արարողակարգի կամ իրավարարության կոնկրետ հանձնարարականներ:

Միեւնույն ժամանակ մենք գտնում ենք, որ գիտական պատմագրության եւ միջազգային իրավունքի տեսակետից Միջազգային դատարանին ուղղված լիարժեք դիմում նախապատրաստելու համար անհրաժեշտ է համազգային հնարավորությունների համակարգում:

Մեր դիրքորոշումն ուժեղանում է նաեւ այն փաստով, որ վերջերս Երեւանում Հայաստանի արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանի հետ հանդիպման ժամանակ Հաագայի միջազգային դատարանի դատախազ Լուիս Մորենո-Օկամպոն հայտարարեց, որ իր տրիբունալը իրավասու է դատական կարգով քննության առնելու Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը:

Ելնելով վերոշարադրյալից, Համաշխարհային հայկական կոնգրեսը (ՀՀԿ) նպատակահարմար է գտնում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին առաջարկել ստեղծելու կոմիտե (խորհուրդ), որը առաջին հերթին կմշակի Սփյուռքի եւ Հայաստանի ներկայացուցչական մարմինների հետ համատեղ գործունեության նոր մեխանիզմ Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության անունից Միջազգային դատարանին ուղղված դիմումի նախապատրաստմանը վերաբերող հարցերի համալիրի առթիվ:

Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունը պետք է դառնա միջազգային-իրավական, տեղեկատվական-քարոզչական, վերլուծական, գիտական, կրթական, լուսավորչական, լոբբիստական գործունեությունը:

Վերոհիշյալ կոմիտեի արդյունավետ ու մշտական գործունեության համար առաջարկվում է Հայաստանի նախագահի ղեկավարությամբ ստեղծել հատուկ հիմնադրամ, որը կկուտակի աշխարհի հայության եւ Հայաստանի բարեկամների ֆինանսական եւ այլ նյութական միջոցները, ստացված միջոցները կհատկացնի աշխատանքի կազմակերպմանը, հաշվի առնելով գործունեության նախանշված ուղղությունները եւ վերջնական նպատակի ապահովումը:

Իր գործունեության ուղղություններին համապատասխան կոմիտեն պետք է մի շարք հանձնաժողովներ կազմի համակարգային, համալիր եւ կենտրոնացված աշխատանքի կազմակերպման համար: Հաշվի առնելով Թուրքիային Հայաստանի ներկայացրած քաղաքական պահանջների սահմանումը, հարկ կլինի դրանցից յուրաքանչյուրի

վերաբերյալ անցկացնել միջազգային-իրավական փորձաքննություն եւ տալ իրավաբանական հանձնաժողովի գնահատականը: Նախանշված դիրքորոշման շրջանակներում կանոնավորապես իրականացնել միջազգային տեղեկատվական-քարոզչական, վերլուծական, գիտական, կրթական եւ լուսավորչական գործունեություն: Նկատի ունենալով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, անհրաժեշտ է կազմակերպել համակարգված ցանցային գործունեություն տվյալ հարցի վերաբերյալ:

Ավելի ու ավելի մեծ թվով օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը մնում է կարեւորագույն քաղաքական խնդիր, քանի որ համապատասխանում է միջազգային իրավունքի, բարոյականության, ժողովրդավարության եւ արդարության նորմերին, ինչպես նաեւ նպաստում է Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության ամրապնդմանը եւ Թուրքիային նախազգուշացնում է հեռու մնալ Հայաստանի դեմ նոր արկածախնդրության դիմելու գայթակղությունից: Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած պետությունների եւ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ցանկը պետք է այսուհետեւ էլ համալրվի:

Սակայն Ցեղասպանության հանցագործության ճանաչումը եւ դրա համար Թուրքիայի դատապարտումը հազիվ թե բավարար լինեն մարդկության դեմ ուղղված այդ հանցագործության հետեւանքների հաղթահարման համար: Համաձայնենք, որ եթե գրեթե 50 տարի ազգային-քաղաքական նկատառումներով մեթոդաբար սպանում են մի ամբողջ ժողովրդի եւ հարյուր տարի անց ժողովրդի մնացյալ մասից լոկ ներողություն են խնդրում, դա հազիվ թե նորմալ համարվի ինչպես բարոյականության, այնպես էլ միջազգային իրավունքի եւ քաղաքականության տեսակետից:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը մնում է Հայաստանի համախմբված (պետական եւ սփյուռքյան) արտաքին քաղաքականության ռազմավարական խնդիրներից մեկը, ուղղակիորեն առնչվում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ռազմավարական անվտանգության ապահովմանը, ինչպես նաեւ հայկական սփյուռքի եւ պատմական հայրենիքի հետ նրա կապերի պահպանմանը: ՀՀԿ-ի առաջարկած Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման համահայկական գործունեության հայեցակարգը կոչված է ապահովելու ազգային շահերի պաշտպանության մեր համատեղ գործունեության արդիականացումը:

Մոտ ժամանակներս ՀՀԿ-ն ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ, գիտական, փորձագիտական ընկերակցության, քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ծրագրում է Երեւանում անցկացնել Հայոց ցեղասպանության խնդրին նվիրված միջազգային գիտական կոնֆերանս, որտեղ հանգամանորեն կքննարկվեն մեր կազմակերպության հայեցակարգային առաջարկությունները:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՄ՝ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ-«Ազգ»

Գերմանահայ փաստաբան Ստեփան Թաշչյանը Բեռլինի վարչական դատարան անհատական հայց է ներկայացրել՝ Գերմանիայի կառավարությունից պահանջելով 1915-16 թթ. հայ ժողովրդի ջարդերը ճանաչել որպես Ցեղասպանություն: «Ազգի» հետ հեռախոսազրույցում պրն Թաշչյանը տեղեկացրեց, որ վարչական դատարան ներկայացված հունիսի 21-ի նույն հայցով նաեւ պահանջ է ներկայացվել, որ Գերմանիայի Դաշնային հանրապետությունը ընդունի իր պատասխանատվությունն այդ Ցեղասպանության համար: Պատասխանատվության հարցում հենց Գերմանիայի Դաշնային Հանրապետությանն է հասցեագրված հայցը, քանի որ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի համաձայն, գերմանական երկրորդ Ռայխի (կայզերական Գերմանիայի) իրավահաջորդը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն է:

Ըստ Թաշչյանի, հայցը պատրաստ է եղել ներկայացվելու դատարան արդեն այս տարվա ապրիլի 24-ին, սակայն տարբեր պատճառներով դա չի արվել՝ մնալով ներկայացման այն օրը, երբ Հայաստանի նախագահը այցելությամբ գտնվում էր Գերմանիայում:

Ամեն դեպքում, արդեն իսկ ներկայացված հայցը, փաստաբանի խոսքերով, դատական ընթացակարգերի համաձայն, կուղարկվի հակառակ կողմին՝ պաշտպանություն նախապատրաստելու համար, որից հետո միայն հայցվորին կտեղեկացնեն իր հայցի արձագանքի մասին: Դրանից հետո, նույն ընթացակարգերի համաձայն, դատարանը հնարավորություն կտա կողմերին ներկայացնելու իրենց ելույթները՝ փաստարկներով ու մեկնաբանություններով:

Դեռեւս 2007 թ. փաստաբանական գրասենյակ ղեկավարող Թաշչյանը գերմանական խորհրդարանի Կովկասի գործերով վարչությանը ներկայացրել է Հայոց ցեղասպանության իրագործմանը գերմանացի զինվորների անմիջական մասնակցության փաստեր:

Թաշչյանի վկայությամբ, ինքը նույն փաստերը ներկայացրել է նաեւ Հայաստանի արտգործնախարարությանը:

Ներկայումս Գերմանիայի կառավարությունը նախընտրում է հակադարձել Հայոց ցեղասպանությանն առնչվող բոլոր հարցերն այն ձեւակերպմամբ, թե դա պատմաբանների գործն է: Ի դեպ, հայ-թուրքական մերձեցման գործընթացի սկզբում էլ Գերմանիան ընդհանրական արձագանքեց, թե 1915-16թթ. կոտորածներին վերաբերող հարցերը հայ-թուրքական խնդիրներ են: Մինչդեռ, ըստ փաստաբան Թաշչյանի, վիճարկելի չէ, որ «Հայոց ցեղասպանությունը չէր լինի, եթե գերմանական Ռայխն իր համաձայնությունը չտար»:

Ստեփան Թաշչյանի խոսքերով, դատական այս հայցն առաջին քայլն է, որին կարող է հետեւել արդեն Հայաստանին Գերմանիայի կողմից փոխհատուցում տրամադրելու պահանջը, որը հնչեցնելու համար թերեւս հարկ կլինի սպասել առնվազն կես տարի, մինչ Բեռլինի վարչական դատարանը կսկսի հիմնական գործընթացը՝ լսելու հայցի կողմերին:

Էլի Եվրոպան դավաճանե՞ց մեզ

2010թ. Մայիսի 20-ին Եվրախորհրդարանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայ-ադրբեջանական հակամարտության կապակցությամբ ընդունեց ,Հարավային Կովկասում ԵՄ-ի ռազմավարության անհրաժեշտության մասինե թիվ 2216, ընդորում խիստ ադրբեջանամետ, բանաձևը:

Հիշյալ բանաձևի ընդունումը լուրջ անակնկալ մատուցեց Հայաստանի Հանրապետության պետական այրերին ու քաղաքական գործիչներին և, ինչու չէ նաև, սփյուռքյան կուսակցություններին ու նաև բոլոր նրանց, ովքեր քրիստոնյա պետությունների համար հայերից պաշտպանելը համարել ու համարում են բարոյական պարտականություն: Որից հետո նշյալ կողմերը, մեկը մյուսի ետևից, հայտարարություններով հանդես եկան և Եվրոպային մեղադրեցին հայերին դավաճանելու մեջ: Ու եթե այդ խառնիճաղանճ պայմաններում անակնկալի եկած հայ քաղաքական կուսակցությունները չքմեղանալու համար ամենատարբեր բառապաշարով ու հայհոյախառն հայտարարություններով դատապարտում էին բանաձևի զեկուցող Եվգենի Կիրիլովին՝ ,ադրբեջանցիներին ծախվելու մեջե, ապա նախագահ Սերժ Սարգսյանը՝ հատուկ կարևորություն տալով ՆԱՏՕ-ի դերին Արցախի հարցի կարգավորման մեջ, զարմցրեց ոչ միայն հայերին, այլ նաև հարևան երկրներին՝ Իրանին ու Ռուսաստանին:

Իհարկե, պիտի ընդունել որ 2216 բանաձևի քննարկումն ու հաստատումը Եվրախորհրդարանի լիագումար նիստում, նաև հայկական կողմի անգործության արդյունքն էր, որովհետև Ե. Կիրիլովի ներկայացրած նախագիծը իր մեջ չէր պարունակում Հայաստանի և ԼՂՀ-ի համար այնքան բացասական կետեր, որոնք ավելի ուշ, Ադրբեջանի և Թուրքիայի դիվանագիտական անձնակազմի աշխատանքի շնորհիվ տեղ գտան հաստատած տարբերակում:

Բանաձևի նախագիծը ներկայացվել էր 2010թ. հունվարի 11-ին, իսկ լիագումար նիստը այն ընդունել է մայիսի 20-ին: Փաստորեն ավելի քան չորս ամիս մեր դիվանագետներն ու Բրյուսելաբնակ հայրենակիցները ժամանակ ունեին, որպեսզի իրենց կարելին ի գործ դնելով, կանխեին այդ ընթացքը, սակայն ոչինչ չարին, իսկ վերջում իրենց չկատարածի համար մեղավորներ են փնտրում ուրիշների մոտ:

Այստեղ խնդիրը միայն Եվրախորհրդարանի թիվ 2216 բանաձևն ու նրա հավանական հետևանքները չեն, այլ այսպես կոչված հայկական դիվանագիտությունն ու հայ դիվանագետների մտածելաեղանակը, որն երևի դարեր պետականությունից զուրկ լինելու ու նաև մերօրյա Հայաստանի Հանրապետությունում իշխող համակարգի տված արդյունքն է:

Եվրոխորհրդարանի 2216 բանաձևը փոթորկեց, ալեկոծեց հայ քաղաքական ,խաղաղ դաշտը: Կրկին հայը արտաբերեց՝ ,Եվրոպացիք դավաճանեցին մեզե, հայտնի նախադասությունը: Իսկ մեկն էլ հարց չտվեց, որ մենք ինչ արինք բանաձևի չստորագրման համար:

Արդեն երկու տասնամյակ է անցնում Հայկական զույգ հանրապետությունների կյանքից, բայց մենք, կարծես թե, դեռ պատրաստ չենք ազգային շահերի վրա հիմնված և ժամանակի հետ համապատասխան սեփական քաղաքականություն որդեգրել: Ճիշտ այդ պատճառով էլ դեռ մինչև այսօր ռուսների, եվրոպացիների, ամերիկացիների և այլնի մոտեցումները գնահատելիս համարում ենք, որ նրանք ,դավաճանում են մեզե: Սակայն մինչև ե՞րբ, մինչև ո՞ւր կարելի է այս տրամաբանությամբ առաջ գնալ: Մենք մեր անգործությունը մինչև ե՞րբ ենք ուզում քողարկել այլոց ,դավաճանությամբե:

,Մեր փրկությունը Եվրոպայից է կախված, ,Ռուսներն են պահել մեզե, ,Ամերիկան էս տարի անպայման կճանաչի Հայոց Ցեղասպանությունը, ,Ամերիկայի հատկացրած տարեկան օգնություններով է ապրում Հայաստանի Հանրապետությունը և այլն:

Վերի տողերը երևի բոլորիս են ծանոթ: Սակայն այստեղ մի պարզ հարց կամ ավելի ճիշտը չլուծված խնդիր կա: Որտեղի՞ց է գալիս մեր անվերապահ վստահությունը այսպես կոչված քրիստոնյա տերությունների՝ Ռուսաստանի, Եվրոպայի և Ամերիկայի նկատմամբ: Ու նաև հակառակը, երբ համոզվում ենք, որ այս անգամ էլ մեր օգտին որևէ քայլ չառան, առանց մի պահ կասկածելու, անցնում ենք մեր թերահավատության մյուս կողմը և մրթմրթում՝ դարերի ընթացքում կրկնված նույն բառերը՝ ,դավաճանեցին մեզե:

Սակայն կարծես մի շատ կարևոր հանգամանք մոռացության ենք տալիս ազգովի՝ որ օտարը մեզ դավաճանել չի կարող: ,Դավաճանե բառի իմաստում պահված է մի շատ կարևոր բացատրություն՝ իրար կարող են դավաճանել ամենահարազատները՝ քույր, եղբայր, ամուսին, որդի, հայր, մայր, արնակից և ամենակարևորը՝ հայրենակիցները: Այս վերջինի վրա ուզում ենք հատուկ շեշտ դնել, քանզի ազգային սահմաններից դուրս ,դավաճանությունը կորցնում է իր իսկական իմաստը: Ազգերի և պետությունների հարաբերությունները, անկախ նրանց մեծ կամ փոքր լինելուց, իմաստավորվում, կազմավորվում են ազգային շահերի հիման վրա, ոչ թե այսպես կոչված՝ ,մարդկայինե, ,կրոնականե և ,բարոյականե այլ արժեքների:

Երկիր մոլորակի բոլոր պետությունները և դրանց շարքում գուցե հենց առաջինները՝ քրիստոնյա պետությունները ունեն իրենց ազգային ու պետական

շահերը և նրանց ղեկավարների ու դիվանագետների առաջնահերթ պարտականությունը իրենց շահերի պաշտպանությունն է և ոչ թե աշխարհի առաջին քրիստոնեա, փոքր ու արդար, Հայկական պետության զորավիգ կանգնելը: Այդ հարցում եթե ոչ ներկան, ապա պատմությունը մեր աչքի առջև է, զոր օրինակ՝ Թուրքիան հակակոմունիստական, հակաեվրոպական, հակաամերիկյան ու նույնիսկ հակահրեական երկիր էր, իսկ հայը՝ ռուսասեր, եվրոպայասեր ու ամերիկայասեր: Սակայն կողմ լինելը չկարողացավ հային տալ իր հայրենիքը կամ գոնե պահպաներ նրա գոյությունը: Թուրքը կոտորեց մեզ, բռնագրավեց մեր հայրենիքի 9-ը 10-րդը, իսկ մեր փառաբանած քրիստոնյա պետությունները՝ Ռուսաստանից Ամերիկա, օգնեցին Աթաթուրքին օսմանական տապալված կայսերությունը հանրապետության վերածելու և հայոց հողին տիրություն անելու գործում:

Մենք՝ հայերս, Հայաստանով ու Սփյուռքով, այնքան ժամանակ քանի դեռ մեր քաղաքական գործունեությունը չենք հիմնավորվում մեր ազգային շահերով և քանի դեռ կազմակերպ, հետևողական և գիտական հիմքերի վրա դրված անկախ քաղաքականություն չենք վարում, անընդհատ ականատես ենք լինելու օտարների կողմից մեզ մատուցվող ,դավաճանություններինե:

Արտավազդ Հայրապետյան

Մշակույթ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 500 ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

1. «Հայագիտական համազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2008 թվականին: Կենտրոնի նպատակն է լուսաբանել հայկական մշակութային ժառանգությունը, մասնավորապես, հայկական գրքարվեստը՝ XVI-XVIII դարերում և հայ պարբերական մամուլի մայր մատենագիտության կազմումը (մինչև 1920 թվականը) և ինտեգրել այն համաշխարհային մշակութային արժեքների շարքում:

2. *Հայկական հնատիպ գրքերի արվեստը*, առ այսօր ուսումնասիրված չէ: Գոյություն չունեն հայազգի փորագրանկարիչների աշխատանքները ներկայացնող որևէ ամփոփ, սիրողական կամ գիտական հիմնավորմամբ աշխատություն: Իսկ գոյություն ունեցող սակավաթիվ աշխատությունները թերի են:
Կենտրոնը իր գործունեության ընթացքում 1106 հայտնի հնատիպ գրքերից թվայնացրել է ընդամենը 100-ը, որոնք աչքի են ընկնում ձևավորման շքեղ տարրերով՝ կիսախորաններով, գլխազարդերով, վերջնազարդերով, լուսանցազարդերով, զարդագրերով և այլն, ինչպես նաև փայտափորագիր պատկերներով: Փորագրանկարչական արվեստի այս գործերը խոսում են միջին դարերում հայ հրատարակիչների ցուցաբերած տաղանդավոր յուրահատկությունների մասին, որոնք լիարժեքորեն կարող են համալրել համաշխարհային մշակութային արժեքների շարքը:

Ծրագրի նպատակն է մինչև 2012 թվականը ստեղծել հայ գրքի զարդարվեստը ներկայացնող կատարյալ զարդադարան, որը հնարավորություն կտա ոլորտում ուսումնասիրություններ կատարել, ինչպես նաև հայ տպագրության հինգ հարյուրամյա տարեդարձի կապակցությամբ լույս ընծայել ***«Զարդարվեստը հայ տպագիր գրքում»*** մատենաշարը:

Աշխատանքների իրականացման գործում ներգրավված են Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի ուսանողները, որոնք իրականացնում են վերոնշյալ մատենաշարի գիտական հետազոտությունները՝ Գրիգոր Մարզվանեցու, Ոսկան Երևանցու, Մխիթար Սեբաստացու հրատարակություններն ու նրանց զարդարվեստը հայ տպագիր գրքերում:

3. *Հայոց պարբերական մամուլը* ավելի քան 200 տարի տպագրվելով 3100 և ավելի անվանումներով 41 երկրների շուրջ 250 քաղաքներում, հանդիսանում է անգնահատելի պատմական ժառանգություն, ուր արտացոլված են տարբեր ժամանակաշրջաններում, աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի մտավոր, հասարակական և քաղաքական կյանքի զարգացման, գաղափարական պայքարի և անկախության երազանքների անխզելի կապը:
Մեզ հայտնի պարբերական մամուլի մատենագրությունները խիստ սահմանափակ են և վերաբերվում են առանձին պարբերականներին: Թերևս մատենագրված պարբերականները ընդհանուրի մեջ կազմում են ոչ ավել քան 3 տոկոս:

Ծրագրի նպատակն է ստեղծել *«Հայ պարբերական մամուլի մայր մատենագիտություն»* **բազմահատորյակը, որտեղ կզետեղվեն հայերեն և օտարալեզու (Հայաստանի և հայերի մասին) բոլոր հրատարակված նյութերը՝ դասակարգված ըստ հեղինակների, պարբերականների, տպագրման վայրերի ու տպարանների, և այլն: Ներկա դրությամբ, քսաներեք գիտական թեմաների շրջանակում՝ «Կռունկ հայոց աշխարհին», «Արևելյան մամուլ», «Ազգասեր արարատյան» և այլն, թվայնացվել և համակարգվել է շուրջ 500 պարբերականներ:**

4. Ոչ բոլոր գրքերն ու պարբերականներն են առկա Հայաստանի Հանրապետության գրադարաններում ու թանգարաններում: Շուրջ 500 անուն գրքեր և բազմաթիվ պարբերականներ սփռված են աշխարհով մեկ՝ Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա և այլն, որոնց ուսումնասիրման աշխատանքները պահանջվում է իրականացնել տեղերում: Վերոնշյալ աշխատանքները մինչև այսօր իրականացվել են Կենտրոնի միջոցներով: Այս եղանակով շարունակել, կնշանակի աշխատանքները ավարտին հասցնել տաս տարի անց՝ 2022 թվականին:

5. «Հայկական գրքարվեստի» և «Հայ պարբերական մամուլի մատենագիտության» ծրագրերի իրականացման համար պահանջվում է 175,000,000 (հարյուր յոթանասուն միլիոն) դրամ: Ծրագրերը մեկը մյուսի հետ խիստ փոխկապակցված են, ուստի նպատակահարմար չէ դրանց իրականացումը կազմակերպել առանձին-առանձին, քանի որ արդյունքում դրանց իրականացման ծախսերը բավական կմեծանան:

6. Կենտրոնը դիմում է հայաստանյան և օտարերկրյա տարբեր կառույցներին՝ վերոնշյալ ծրագրերի իրականացման մասնակիցը դառնալու առաջարկով, քանի որ այն կենսական անհրաժեշտություն է հայկական մշակույթի լուսաբանման քաղաքականության գործում:

Զարդարվեստը եւ փորագրանկարչությունը հայ տպագիր գրքում

Հայ տպագիր գրքի պատմությունը տառապանքների ու զրկանքների, ինչպես նաեւ անհատների սխրագործությունների ու հաղթանակների մի ամբողջ շղթա է, որում իր ուրույն դերն ունի Հայոց եկեղեցին: Չնայած դարերով ենթարկված զրկանքներին ու հալածանքներին, այն կարողացել է սատար կանգնել հայապահպանությանն ու հայ ժողովրդի ժառանգությանը, ինչի արդյունքում մեզ է ավանդել մշակութային մեծ եւ անուրանալիորեն արժեքավոր ժառանգություն:

16—րդ դարում հայ մշակութային կյանքում տեղի ունեցավ չափազանց կարեւոր մի իրադարձություն՝ հայկական տպագրության սկզբնավորումը եւ առաջին հայ մարդը, ում հաջողվեց Եվրոպայում հիմնել տպարան եւ հրատարակել հայերեն գրքեր, Ջուղայեցի Հակոբն էր, որն այժմ հայտնի է Հակոբ Մեղապարտ անունով: Սակայն Հակոբ Ջուղայեցու մահից հետո շուրջ կես դար հայերեն գրքեր չեն հրատարակվել: Միայն 1562 թ. Միքայել Սեբաստացի կաթողիկոսի հանձնարարությամբ Աբգար Թոխատեցին իր որդի Սուլթանշահի եւ Ալեքսանդր քահանայի հետ ճանապարհվել է Հռոմ եւ այդ ուղեւորության արդյունքում դրվեց հայկական տպագրության նոր ժամանակաշրջանի սկիզբը: 2012 թ. լրանում է հայ գրատպության սկզբնավորման 500—ամյակը, որին ընդառաջ հայագիտական համազգային կենտրոնը կազմել եւ իրագործում է հետազոտական մի ծրագիր, որի արդյունքը պիտի դառնա «Զարդարվեստը եւ փորագրանկարչությունը հայ տպագիր գրքում 1512—1800թթ.» մատենաշարի լույսընծայումը:

Այս կապակցությամբ հայագիտական համազգային կենտրոնի ղեկավար Գեւորգ Ներսեսյանը «ՀՀ»—ի հետ զրույցում ասաց. «Հայկական տպագրության 500 ամյակի կապակցությամբ կենտրոնն իրականացնում է երկու, միմյանց հետ փոխշաղկապված ծրագրեր: Հայտնի է, որ հայ հրատարակիչներն ի սկզբանե գրքերի հրատարակման գործում կիրառում էին ձեռագրերի ձեւավորման ավանդույթները. գրքերի էջերը ձեւավորում էին կիսախորաններով, շքեղ գլխազարդերով, վերջնազարդերով, լուսանցազարդերով, տեքստն սկսում էին զարդագրերով կամ գլխատառերով, մանրանկարները փոխարինում էին փորագրանկարներով: Այս երեւույթը պայմանավորված էր նրանով, որ տպագիր գիրքը նոր երեւույթ էր հասարակական կյանքում, եւ այն կարիք ուներ հասարակության համար ընկալելի դառնալու: Այսպիսով՝ զուգահեռ զարգանում էր արվեստի եւս մի բնագավառ: Վերջինիս ուսումնասիրությանն ու դասակարգմանն է միտված կենտրոնի գործունեությունը եւ նպատակ ունի հայկական տպագրության 500—ամյակի կապակցությամբ հրատարակել «Զարդարվեստը եւ փորագրանկարչությունը հայ տպագիր գրքում 1512—1800թթ.» մատենաշարը, որտեղ առանձին—առանձին կներկայացվեն հրատարակիչների գործունեությունը եւ նրանց արվեստը»:

Կենտրոնը մինչեւ այսօր ուսումնասիրել է շուրջ 110 անուն գիրք, որը կազմում է ընդհանուր գրքերի ընդամենը 10 տոկոսը, հայտնաբերել է ավելի քան 7300 զարդանմուշ եւ ավելի քան 300 փորագրանկար: Կենտրոնի հաջորդ ծրագիրը «Հայ պարբերական մամուլի մայր մատենագիտության» ստեղծումն է: Հայտնի է, որ հայ պարբերական մամուլն սկզբնավորվել է 18—րդ դարում. 1794 թվականին Մադրասում Հարություն Շմավոնյանը, իր իսկ կողմից հիմնած տպարանում, գրաբարով, մասամբ էլ հնդկահայ եւ Նոր Ջուղայի բարբառով լույս ընծայեց «Ազդարար» ամսագիրը: Այն գոյություն ունի ավելի քան 200 տարի: Մինչեւ 1920 թվականը հրատարակվել է ավելի քան 3000 անուն պարբերական աշխարհի շուրջ 40 երկրների 200 քաղաքներում:

Գոյություն ունեն եւ այժմ էլ շարունակվում են հրատարակվել պարբերական մամուլի առանձին մատենագիտություններ կամ, այսպես կոչված, բովանդակության ցանկեր՝ Արարատի, Լումայի, եւ այլնի: Կենտրոնի ղեկավարը նշեց. «Մեր նպատակն է պարզապես ստեղծել հայ պարբերական մամուլի մայր մատենագիտությունը, որը կընդգրկի մինչեւ 1920 թվականը հրատարակված բոլոր պարբերականների բովանդակության ցանկերը»:

Վերոնշյալ երկու ծրագրերը ներկայացվել են Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ—ին: Վեհափառ հայրապետը նաեւ հյուրընկալել է հայագիտական համազգային կենտրոնի անդամներին, տեղեկացել հայկական տպագրության 500—ամյակի կապակցությամբ կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերին՝ պատրաստակամություն հայտնելով սատարել այս նախաձեռնության իրականացմանը: «Մեզ համար կարեւոր էր կենտրոնի աշխատանքներին տրված գնահատականը եւ, ստանալով Վեհափառի օրհնությունը ծրագրերի իրականացման գործում, ու Մայր աթոռի աջակցությունը՝ 2012 թվականին «Զարդարվեստը եւ փորագրանկարչությունը հայ տպագիր գրքում 1512—1800թթ.» մատենաշարի հատորյակների տպագրման գործում, մենք ավելի ոգեւորվեցինք ու պարտավորվեցինք»:

Հավելենք, որ կենտրոնը վերոհիշյալ ծրագրերն իրականացնում է սեփական միջոցներով, բայց, Գեւորգ Ներսեսյանի խոսքերով, պետական աջակցության եւ

մասնավոր ընկերությունների ներգրավման դեպքում 10—12 տարվա փոխարեն աշխատանքները հնարավոր կլինի ավարտել երկուսից երեք տարում:

Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պրոֆ. Օ. Պ. Աղայան

Հայ ժողովուրդը Առաջավոր Ասիայի քաղաքակրթության հնագույն կրողներից է, որի հարատևումը նրա ազատագրական ոգու և պայքարի փայլուն առհավատչյան է: Դարեր շարունակ ազատագրական պայքարը եղել է նրա գոյատևման անհրաժեշտ պայմանը և արտահայտություն գտել նրա կյանքի տարբեր ոլորտներում՝ հասարակա-կան-քաղաքական, մշակութային և ռազմական:

Եւ իրոք, հայ ժողովուրդը ազատագրական պայքար է մղել, մահու և կենաց կռվի ելել հռոմեական լեգեոնների (I դ. մ. թ. ա.): պարսիկների (V դ.), արաբների (VII—IX դդ–) դեմ: նա վճռական դիմադրություն է ցույց տվել Բյուզանդական կայսրության հայահալած քաղաքականությանը, որի հետեւանքով XI դ. վերացվեցին Տարոնի, Տայքի, Վասպուրականի, Անիի, Կարսի հայկական թագավորությունները: նաև Բյուզանդիայի հակահայկական ընթացքով պիտի բացատրել սելջուկների արշավանքների հաջողությունը Փոքրը Ասիայում և այնտեղ նրանց հաստատվելը: Այս շրջանում ուժեղացավ հայերի հոսքը դեպի Կիլիկիա, որտեղ 1080 թ. հիմնվեց Ռուբինյանների իշխանությունը: Ռուբինյան իշխաններր, հմտորեն օգտագործելով թուրք-սելջուկների, խաչակիրների և Բյուզանդական կայսրության հակասությունները, կարողացան ընդարձակել իրենց տերիտորիան և ստեղծել Կիլիկիայի հայ- կական թագավորությունը: Արդեն XII դարի առաջին կեսին այդ թագավորությունը բավականաչափ ուժեղացավ և Լևոն II-ի ժամանակ հասավ իր հզո-րությանը:

Թաթար-մոնղոլական արշավանքները XIII դ. ահավոր ավերածության ենթարկեցին Հայաստանը: 1236 թ. վերջ տրվեց Զաքարյանների իշխանությանը: 1375 թ. նույն ճակատագրին արժանացավ Կիլիկիայի հայկական թագավորությունը: Եգիպտական մամլյուկները Կիլիկիայի մայրաքաղաք Սիսը գրավելուց հետո, կործանեցին հայկական թագավորությունը: Թուրքերի նախորդները՝ Թուղրիլ ցեղապետի գլխավորությամբ Միջին Ասիայից Անատոլիա թափանցեցին XIII դ.: Թուղրիլի մահվանից հետո նրա որդին՝ Օսմանը 1299 թ. ստեղծեց իր պետությունը, որը նրա անունով էլ հետագայում կոչվեց Օսմանյան կայսրություն: Օսմանի հաջորդը՝ նրա որդի Օրխան, ստեղծելով կազմակերպված բանակ, սրի ու հրի ուժով սկսեց ընդարձակել իր տիրակալությունը: Նա գրավված Բրուսան դարձրեց պետության մայրաքաղաք և սկսեց հարձակումներ գործել արդեն իր հզորությունը կորցրած Բյուզանդիայի վրա: Սուլթան Մուրադի օրոք թուրքերը սկսեցին տարածվել Բալկաններում, իսկ նրա որդի Բայազիտն ավելի ընդլայնեց օսմանյան աշխարհակալությունը:

1387 թ. Հայաստանն ընկավ Լենկթեմուրի բռնապետության տակ: 1402 թ. Լենկթեմուրը Անկարայի մոտ Բայազիտին գերեվարեց, դա ժամանակավորապես հետաձգեց օսմանյան տիրակալության հետագա ընդարձակումը: Սակայն սուլթան Մահմուդը 1453 թ. մայիսի 29-ին գրավեց «Երկրորդ Հռոմը»՝ Կոստանդնուպոլիսը, և վերջ տվեց Բյուզանդական կայսրությանը:

Փոքր Ասիայում և Բալկաններում սուլթանի տիրակալության հաստատումը մեծագույն չարիք էր բազմաթիվ ենթակա ժողովուրդների համար: Անդրկովկասում, զգալի ավերածությունների պատճառ դարձան նաև աղկոյունլու և կարակոյունլու ցեղախմբերի հակամարտությունները, որոնք ավարտվեցին աղկոյունլու ցեղապետի՝ Ուզուն Հասանի հաղթանակով: Նրա իշխանության տակ ընկավ նաև Հայաստանը:

Սուլթան Սելիմը, սակայն, ետ խլեց Հայաստանը, 1517 թ. գրավեց Կիլիկիան, ապա Սիրիան ու Եգիպտոսը: Իսկ նրա որդին Սուլեյմանը, Օսմանյան կայսրության հզորությունը հասցրեց իր գագաթնակետին, նրա տիրակալության սահմանները ձգվում էին Լեհաստանից, Ուկրաինայից և Հյուսիսային Կովկասից մինչև Հնդկական օվկիանոս, Զագրոսի լեռներից մինչև, Ատլանտյան օվկիանոս:

Վիեննան գրավելու և Եվրոպային տիրելու համար 1683 թ. նոր արշավանք ձեռնարկվեց: Դա վերջին փորձն էր: Ավստրիացիների, լեհերի և մյուս ժողովոլրդների միասնական հարվածով Կարա Մուստաֆա փաշայի հզոր բանակը ջախջախվեց: Նրա դեմ լեհական բանակի շարքերում կռվում էին ոտ 5 հազար լեհաբնակ հայեր:

Ավելի քան երկուս ու կես դար տևող (1473 —1746) օսմանա-պարսկական պատերազմների ընթացքում Հայաստանն ահեղ մարտերի թատերաբեմ դարձավ: Երկիրն ամբողջությամբ ավերածության ենթարկվեց, բնակչության գերակշռող մասը ոչնչացվեց: Արտագաղթը դարձավ կործանարար չարիք: Բնակչության հարկադիր տեղաշարժերից բացի, որ կատարեցին Շահ Աբբասը և ուրիշ տիրակալներ, բնակչության մի զգալի մասը, չտանելով անլուր հալածանքները, դիմում էր պանդխտության: Այս ամենի հետևանքով Հայկական լեռնաշխարհը բնակեցվեց թուրք և այլ ցեղերով: Չնայած դրան, հայերը շարունակում էին մեծամասնություն կազմել: Եվրոպացի ճանապարհորդ Տավերնիեն, որ 1632 —1668 թթ. ընթացքում վեց անգամ այցելեց Մերձավոր Արևելք, գրում է, որ անցնելով Թոքատից մինչև Թավրիզ, նախկինում Հայկական նահանգ կոչվող այդ տարածության վրա, քաղաքներում ու գյուղերում մեկ մահմեդականի դիմաց հիսուն հայ էր հանդիպում:

Թուրքական պետությունը ի սկզբանե հպատակ այլադավան ազգություններին իրեն ձուլելու քաղաքականություն էր վարում: Պատմությանը հայտնի է, որ մի շարք սուլթաններ քրիստոնյաներին սրի քաշելու որոշում են ընդունել: Հենց այդ նպատակով էին ստեղծվում ենիչերիների գնդերը, որոնք կազմվում էին տուրքի դիմաց տարված և մահմեդականացված քրիստոնյա պատանդներից: Հավատափոխությանը նպաստում էր նաև գլխահարկը: Չափազանց ծանր ու գանձման եղանակներով դաժան այդ հարկը ստիպում էր ոմանց մահմեդականություն ընդունել, որպեսզի դրանով ազատվեն անընդհատ սաստկացող ճնշումներից ու ջարդերից:

Օսմանյան կայսրությունում նույնիսկ գույք ունենալու, մինչև անգամ կրոնական արարողություն կատարելու թույլտվությունը կախված էր սուլթանների գթությունից, որ ձեռք էր բերվում զանազան հնարամտությունների կամ էլ կաշառք տալու միջոցով:

Քրիստոնյաների՝ «գյավուրների» խոսքը, երդումը որևէ արժեք չունեին, նրանց վկայությունը հաշվի չէր առնվում: Դա նշանակում էր, որ Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյաները մահմեդականների հանդեպ իրենց իրավունքները պաշտպանելու ոչ մի երաշխիք չունեին: Տիրողը կարող էր իրեն ենթակա քրիստոնյային նույնիսկ սպանել, բռնագրավել նրա ունեցվածքը և մնալ անպատիժ: Մի երկրում, որտեղ շարքային աստիճանավորից մինչև սուլթանը կաշառք էին վերցնում, որևէ օրինականության մասին չէր կարող խոսք լինել: Եվ իսկապես, «անհուն կամայականությանց թագավորություն էր Օսմանյան կայսրությունը, ու մեծ վեզիրներն անգամ ապահով չէին, թե վաղը ո՞ղջ պիտի մնային: Այդ կացության մեջ ինչպես կարող էր ապահով ըլլալ ռայան, որուն նկատմամբ ոչ մեկ բռնություն, ոչ մեկ արդարություն արգելված չէր»:

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը քանիցս նշել են, որ Թուրքիայում անձի անձեռնմխելիությունը ապահովված չէ:Ոչ մահմեդականների սոսկ ապրելը, օդ շնչելը, նրանց հանգուցյալների համար գերեզմանատեղի հատկացնելը, եկեղեցիներ կառուցելն ու իրենց հավատքը դավանելը ինչ-որ զիջում ու մեծահոգություն էր համարվում, որ անում էին սուլթանները: Փողոցի մայթով քայլելու և ձի հեծնելու իրավունքը միայն մահմեդականինն էր: Քրիստոնյաները զրկված էին մինչև անգամ ցանկացած հագուստը կրելու իրավունքից:

Հայ ժողովուրդն այդպիսի ստորացուցիչ պայմաններում շարունակում էր փրկության ուղիներ որոնել, ձգտում էր ազատագրվել օսմանյան բարբարոսական լծից:

Ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը ժողովրդի ազատագրական պայքարն էր անկախության համար: Սակայն ի՞նչ միջոցներով: Կարող էր արդյոք հայ ժողովուրդը միայն սեփական ուժերով հասնել այդ նպատակին: Թուրքիայի ծանր լծի տակ գտնվող արաբ, հույն, հայ, քուրդ և Բալկանյան թերակղզում բնակվող բազմաթիվ այլ ժողովոլրդների ազատագրության միակ իրական երաշխիքը միասնական պայքարն էր: Բայց ավատատիրական կտրտվածությունը, տնտեսական ու քաղաքական հետամնացությունը և ազգային ու կրոնական հակասությունները, ինչպես նաև եվրոպական տերությունների մեքենայությունները, արգելակում էին ճնշված ժողովուրդների միասնական ճակատի ստեղծումը: *Շար. 1*

Խոհեր

Մեր անցած ճամբան

Թ. Ղարախանյան Միրակցի

Ահվազ քաղաքը-2

Դե այսպես ամաչելով համոզվեցի միչեւ վիճակահանության կատարվելը Ահվազ քաղաքում մորաքրոջ նեղություն տայի: Ամեն օր փողոցներում դեգերում էի, հայ տղաներ փնտրելով, մինչեւ որ մի քանի օր անց մի սափրիչի դռան մոտով անցնելիս հայ մարդու ձայն լսեցի որ ասում էր. «գլուխտ ձախ պտտե»: Մանրամասնությունը դժվար է հիշել, բայց իմացա որ այդ ձայնը ջահել մարդու ձայն էր: Ուրախությունից սիրտս ոկսեց թռվռալ այն մտքի համար որ մտածեցի գործի անցնելու համար այդ մարդը լինելով սափրիչ՝ շատ մարդիկ պիտի ճանաչի եւ կարող եմ նրանից տեղեկանալ Ահվազ քաղաքի մասին: Մի կես ժամ խանութի մոտակայքում քայլեցի որ տեսնեմ երբ առիթ կլինի սափրիչ մարդը դուրս գա որպեսզի առիթ ունենամ նրա հոտ ոսելու:

Այս ու այն կողմ էի նայում եւ մտածում որ ես այսքան ամաչկոտս ինչ պիտի հարցնեմ, երբ աչքս մի ուրիշ խանութի ընկավ որի ցուցափեղկի վրայ պարսկերենով գրված էր «Քաֆֆաշի Սաքո»" (Սաքո կոշկակարանոց): Մտածեցի արդյո՞ք նա հենց մեր Մասչեդ Սուլեյմանի կոշկակար Սաքոն է թէ մի ուրիշը: Մոտեցա եւ ականջ դրի, խանութի մեջից պարսկերեն խոսակցություն լսեցի, սպասեցի միչեւ մէկը դուրս գար եւ իմ բախտից մի հաճախորդ ծիծաղալով եւ շնորհակալություն հայտնելով դուրս եկավ եւ մի քիչ հեռացավ: Ամոթխածությամբ կիսաբաց դուռը բացեցի եւ տեսա մեր Մասչեդ Սուլեյմանի կոշկակար Սաքոին: Ոչ ես բարեւեցի ոչ էլ ինքը, մի քիչ պաչ-պչվեցինք, գրկախառնվեցինք ու նստեցինք ինքը իր ՈՒՍՏԱ Սաքոի տեղը ես էլ հաճախորդի: Ապա հենց ինքը ասաց, որ Մասչեդ Սուլեյմանի Նավթի Ընկերությունը Ահվազ է փոխադրվելու եւ հայերից շատ-շատերը պիտի Ահվազ քաղաք գան. Ընկերությունը Ահվազ եւ Թեհրան քաղաքներ էր փոխադրվելու, եւ Աբադան, Աղաջարի ու Օմիդիեի գործողների թիվն էլ շատ պիտի պակսեր: Հայության ամենաշատ կրթվածները Աբադան էին աշխատում եւ Թեհրան պիտի գնային ու հայերից շատերն էլ որ լավ վիճակ չունեին կամ լավ գործ չեին տիրապտում պիտի Նոր Ջուղա գնային որովհետեւ Ընկերությունը իրենց պատասխանել էր եւ օտար տեղ գործ չկար:

Թեեւ Սաքոն մի քանի տարով ինձանից մեծ էր, բայց իր ընտանիքը հենց նույն պատճառներով Չարմահալի Հաջի-Աբադ գյուղից եին Մասչեդ Սուլեյման եկել եւ մենք տարիներ նույն շրջանում էինք ապրում որ նկատեցինք Սաքոն մի քանի ժամանակ է Մասչեդ Սուլեյմանը թողել եւ, եկել էրւ Ահվազի այս խանութն է բացել: Արդեն ինքը ասաց, որ իմ մորաքրոջս լավ ճանաչում էր եւ իր լավ հաճախորդներից էր: Ուրեմն մի քիչ էլ իմ մասին պատեմելուց հետո Սաքոից հարցրի Ամերիկական հաստատությունների եւ գործ ճարելու մասին եւ ինքը առանց մտածելու ասաց «էտ Ընկերությունների մեծամեծների կնիկները թամամ Համոի մուշտարիքն են. Համոից հարցրու: Արդէն իմացա որ գուցե այդ «գլուխտ ձախ պտտե»-ի ասողը հենց ինքը լինի:

Եւ այսպես զինվորության վիճակահանությունը մտքիցս թռավ եւ ուրախ-ուրախ Սաքոին ցտեսություն ասի մինչեւ Սափրիչ Համոի հանդիպելը:

Վանիկ Բաղդասարյան